# ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2026թ. /ապրիլ 13 Թալին համայնք, Դաշտադեմ բնակավայր /

## օրակարգ՝

Դաշտադեմ բնակավայրում 6,65ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցում

2026թ. ապրիլի 13-ին, Դաշտադեմ բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում կայացավ «Դաշտէներգո» ՍՊԸ-ի կողմից փորձաքննության ներկայացված Դաշտադեմ բնակավայրում 6,65ՄՎՏ հզորությամբ արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ հանրային երկրորդ լսումը, որը օրենքով սահմանված կարգով ներկայացրեց ՇՄ նախարարության «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետ Շ. Կարապետյանը: Հանրային լսմանը ներկա էին նաև բնակիչներ, նախաձեռնող ընկերության ներկայացուցիչները, բնակավայրի ղեկավարը:

Շ.Կարապետյանի կողմից ներկայացվեց Նախագծի և ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՇՄՆ և շահագրգիռ այլ կառույցների կողմից ներկայացված դիտողությունների և առաջարկությունների, լրամշակման ներկայացման օրենսդրական ընթացակարգերը, նախատեսվող գործունեության շահագործման ընթացքում շրջակա միջավայրի բաղադրիչների վրա սպասվող հիմնական ազդեցությունները: Ընկերությունը գործընթացի կազմակերպումը նախատեսում է իրականացնել երկու փուլով՝ հետագա աշխատանքները ևս սահմանված կարգով փորձաքննության ենթարկելու նպատակով:

Հանրային լսման ընթացքում Ընկերության ներկայացուցիչները մանրամասն ներկայացրեցին սոցիալական ծրագիրը, համայնքի համար նախատեսված ֆինանսական հատկացումները, ինչպես նաև տարածքում առկա պատմամշակութային շերտերի վերաբերյալ տեղեկատվությունը՝ ծրագրի իրականացման ընթացքում դրանց պահպանության ապահովման համատեքստում:

Հանրային լսումն անցավ արդյունավետ քննարկման մթնոլորտում: Ներկաները կողմ արտահայտվեցին իրականացվող աշխատանքներին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի
գլխավոր մասնագետ՝ Շ.Կարապետյան

«Դաշտէներգո» ՍՊԸ